

ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ՀՈՎԱԿԻՄԻ ԳԱՄՊԱՐՅԱՆ

**ԱՆԿԱՆԻՏԻԿ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՈՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

**Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ
տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

Երևան – 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Հայ-Ռուսական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Վարդան Բաբկենի Բոստանջյան

**Պաշտոնական
ընդդիմախոսներ՝**

տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Արմեն Աշմատի Հակոբյան

տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Գևորգ Ֆերդինանտի Կիրակոսյան

**Առաջատար
կազմակերպություն՝**

Հայաստանի պետական
տնտեսագիտական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2020 թվականի հունվարի 22-ին, ժամը 14⁰⁰-ին, Հայ-Ռուսական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի Տնտեսագիտության թիվ 008 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0051, ք. Երևան, Հովսեփ Էմինի 123:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայ-Ռուսական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019 թվականի դեկտեմբերի 13-ին:

**008 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար**

**տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Ի.Բ. Պետրոսյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հեղափոխության թեմայի արդիականությունը: Վճարահաշվարկային համակարգերը յուրաքանչյուր երկրի տնտեսության կարևորագույն տարրերից մեկն են: Ֆինանսական հոսքերի կառավարման և ֆինանսական ռեսուրսների ճիշտ վերաբաշխման համար ցանկացած երկրում պետք է գործեն վճարահաշվարկային համակարգեր: Այդպիսի համակարգերին և առհասարակ ակտիվներին, ֆինանսական հոսքերին ու ռեսուրսներին առընչվող գործընթացներն ենթադրում և պահանջում են հաշվարկների մեծագույն հստակություն և հավաստիություն, ինչը հնարավոր է իրականացնել օգտագործելով անկանխիկ հաշվարկների տարատեսակ մոտեցումներ՝ անպայմանորեն կիրառելով ժամանակակից տեխնիկական միջոցները: Հուսալի և գործուն վճարահաշվարկային համակարգերն ունեն կարևոր դեր ֆինանսական համակարգի արդյունավետ գործունեության համար, քանի որ անկանխիկ հաշվարկների գործարքների արդյունավետ կազմակերպման արդյունքում էականորեն բարձրանում է թե՛ ակտիվների, թե՛ պարտավորությունների, և թե՛ իրացվելիության կառավարման մակարդակը:

Անկանխիկ հաշվարկները՝ առհասարակ խոշոր հաշվարկները, ֆինանսական հոսքերը և վճարահաշվարկային համակարգերի շահագործումը պահանջում են ժամանակակից տեխնիկական միջոցների օգտագործում և անկանխիկ հաշվարկների ամբողջ համակարգի առկայություն: Այս պայմանների առկայության դեպքում հնարավոր կլինի ապահովել վճարահաշվարկային համակարգերի թափանցիկությունը, լիարժեքությունը և հստակությունը:

Ելնելով այս հրամայականից, ՀՀ-ում իրականացվող բարեփոխումների շրջանակում արդեն իսկ իրականացվել են որոշակի աշխատանքներ վճարահաշվարկային համակարգերի կառուցման, վերահսկման և կատարելագործման ուղղությամբ, մասնավորապես, ներդրվել է քլիրինգային համակարգը, նույնաքաղաքային վճարումների համակարգը, CBANet միջբանկային միջազգային ցանցը, BANK MAIL համակարգը, առևտրային բանկերը միացել են S.W.I.F.T և միջազգային տարբեր վճարային համակարգերին (Western Union, Money Gram, Unistream, Exspress և այլն), բանկերը ներկայումս ոչ միայն սպասարկում, այլ նաև թողարկում են պլաստիկ քարտեր, ստեղծվել է քարտային միասնական համակարգը («ԱրՔա»), ձևավորվել են նաև վճարահաշվարկային ծառայություններ մատուցող, այդ թվում, թվային փողեր թողարկող կազմակերպություններ:

Ներկայումս վճարահաշվարկային համակարգում գոյություն ունեցող խնդիրների լուծումը պահանջում է տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման համալիր մոտեցում, որն իր հերթին կարող է նպաստել երկրում վճարահաշվարկային համակարգի գործունեության արդյունավետության բարձրացմանն ու ազգային տնտեսության զարգացմանը: Սակայն կարևոր է

հաշվի առնել այն փաստը, որ ցանկացած երկրի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացում գոյություն ունեցող խնդիրները տարաբնույթ են, և այս պարագայում ցանկալի է որդեգրել տեղական պայմանների համար կիրառելի և բարենպաստ մոտեցումներ ու սկզբունքներ:

Հարկ է սակայն նշել, որ իրականացված աշխատանքներով հանդերձ հանրապետության վճարահաշվարկային համակարգի գործունեության ասպարեզում դեռևս կան չլուծված բազմաթիվ խնդիրներ, որոնք էականորեն ազդում են դրա արդյունավետության վրա: Այդ խնդիրները բացահայտելու, ինչպես նաև դրանց լուծման մոտեցումներ մշակելու նպատակով ատենախոսությունում ուսումնասիրվել են տարբեր երկրներում վճարահաշվարկային համակարգը կարգավորող իրավական կանոնակարգերն ու ընթացակարգերը, այդպիսի համակարգերի գործունեության առանձնահատկությունները, դրանցում մատուցվող ժամանակակակից ծառայությունների ներդրման և նոր վճարահաշվարկային գործիքների օգտագործման մեխանիզմները: Վերջիններիս ստեղծումը և գործնական ներդրումը Հայաստանում կապված են բազմաթիվ խնդիրների լուծման հետ, որոնցից կարևորագույններն են վճարահաշվարկային համակարգում էլեկտրոնային փողերի շրջանառության կազմակերպման, ինչպես նաև այդ գործընթացի արդյունավետության ապահովման հիմնախնդիրները: Ատենախոսությունը նվիրված է դրանց ուսումնասիրությանը և այդ ուղղությամբ արդյունավետ մոտեցումների մշակմանը, ինչով էլ պայմանավորված է ատենախոսության թեմայի հրատապությունն ու արդիականությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը շուկայական տնտեսության պայմաններում ՀՀ վճարահաշվարկային համակարգում էլեկտրոնային փողերի ներդրմանն ու դրանց շրջանառության արդյունավետության բարձրացմանն ուղղված մոտեցումների և առաջարկությունների մշակումն է, որին հասնելու համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները՝

- ուսումնասիրել վճարահաշվարկային համակարգի էության ու կազմակերպման առանձնահատկությունը, և մշակել դրա հետ կապված գործարքների իրականացման տնտեսական սկզբունքներ,
- վերլուծել վճարահաշվարկային հարաբերությունների ձևավորման միջազգային փորձը և մշակել էլեկտրոնային վճարման միջոցների օգտագործման կարգեր,
- կատարել վճարահաշվարկային համակարգում անկանխիկ հաշվարկների կիրառման վերլուծության և դրանց արդյունավետության բարձրացման մեթոդների մշակում,
- ուսումնասիրել վճարահաշվարկային հարաբերությունների իրավական կարգավորման տարածաշրջանային խնդիրները,

- ներկայացնել վճարահաշվարկային համակարգում գործող և ընդունված մեթոդների առավելություններն ու խոցելի կողմերը,
- մշակել Հայաստանի Հանրապետության վճարահաշվարկային համակարգի և, մասնավորապես, անկանխիկ հաշվարկների արդյունավետության բարձրացմանն ուղղված գործնական առաջարկներ,
- մշակել վճարահաշարկային համակարգի արդյունավետության գնահատման և մոնիտորինգի հայեցակարգ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Ուսումնասիրման օբյեկտը ՀՀ վճարահաշվարկային կազմակերպություններն են և բանկային համակարգը, իսկ ուսումնասիրման առարկան՝ վճարահաշվարկային համակարգում անկանխիկ հաշվարկներն են, իրավական կարգավորման հիմնահարցերը, ինչպես նաև անկանխիկ հաշվարկներում նոր ծառայությունների ներդրման հիմնախնդիրները:

Հետազոտության տեսամեթոդական հիմքը և տեղեկատվության ապահովումը: Հետազոտության համար հիմք են հանդիսացել ՀՀ բանկային օրենսդրական դաշտը, միջազգային փորձում կիրառվող համապատասխան ոլորտը կարգավորող իրավական ակտերը, համացանցից դուրս բերված մասնագիտական, տեղեկատվական նյութերն ու վերլուծությունները, ատենախոսության թեմայի հետ կապված օտարերկրյա կազմակերպությունների կողմից հրապարակված նյութերը: Ուսումնասիրության օբյեկտին առընչվող հայրենական և օտարերկրյա տնտեսագետների աշխատանքները, գիտական հետազոտությունները և գիտական ամսագրերը:

Ուսումնասիրության համար տեղեկատվական հիմք են հանդիսացել ՀՀ ԿԲ-ի, վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների, Համաշխարհային բանկի, Հաշվարկների միջազգային բանկի և միջազգային մի շարք այլ գործակալությունների պաշտոնական տեղեկատվական նյութերը և հետազոտությունները:

Ատենախոսությունում կիրառվել են տնտեսամաթեմատիկական, վիճակագրական, գրաֆիկական, սխեմատիկ և համեմատական վերլուծության մեթոդներ:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը: Ատենախոսությունում իրականացված ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա ստացվել են տեսական և գործնական նշանակության մի շարք արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ կարևորվում են հետևյալները.

- Վճարահաշվարկային համակարգի համակողմանի գնահատմամբ մշակվել են էլեկտրոնային փողերով կատարվող առևտրի, դրանց հետ կապված գործարքների կազմակերպման և էլեկտրոնային փաստաթղթերի ձևակերպման, ինչպես նաև վերջիններիս ճանաչման և տվյալ գործընթացի իրականացման մեթոդական մոտեցումներ:

- Հայաստանի ֆինանսական շուկա միջազգային հայտնի համակարգերի մուտքն ապահովելու նպատակով մշակվել է անկանխիկ գործարքների իրավական և նորմատիվային կարգավորման բարելավման միջոցառումների ծրագիր՝ ուղղված վճարահաշվարկային կազմակերպությունների տնտեսական նորմատիվների որակական բնութագրիչների վերանայմանը և միջազգային չափանիշներով վճարահաշվարկային գործունեության կազմակերպմանը:
- Անկանխիկ գործարքների արդյունավետության բարձրացման նպատակով մշակվել է հաշվարկների իրականացման մեթոդ, որը ելնելով գործընթացում կիրառվող պարամետրերի (էլեկտրոնային գործիքի հուսալիության ցուցանիշ, համակարգում շրջանառվող դրամական միջոցներ, գործարքի տոկոսադրույք, վճարային գործիքների քանակ և այլն) գործադրման ինտենսիվության աստիճանից թույլ կտա որոշել գործարքի ընդհանուր արդյունավետությունը:
- Ներկայացվել է վճարահաշվարկային համակարգերի գործունեության արդյունավետության չափման և մոնիտորինգի հայեցակարգ, հիմնված անկանխիկ փոխանցումների ներքին և արտաքին շահառուների նպատակադրումների փաստացի հասանելիության աստիճանի գնահատումների վրա:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը:

Հետազոտությունների գործնական և տեսական նշանակությունը ՀՀ վճարահաշվարկային համակարգում, էլեկտրոնային փողերի և էլեկտրոնային առևտրի ներդրման հիմնախնդիրների բացահայտման նպատակով կատարված ուսումնասիրությունների և վերլուծությունների, էլեկտրոնային փողերի զարգացման, առաջարկվող նոր գործիքների և ծրագրերի ներդրման մեջ է: Վերոնշյալները կարող են իրականացվել ինչպես առանձին հաստատությունների՝ բանկերի, վճարահաշվարկային կազմակերպությունների, այնպես էլ ԿԲ-ի հետ համատեղ: Դրանց իրականացումը կարող է նպաստել կանխիկ շրջանառության ծավալների կրճատմանը և համապատասխանաբար՝ անկանխիկի աճին և վերջին հաշվարկով, ՀՀ-ում էլեկտրոնային փողերի կիրառման զարգացմանն ու արմատավորմանը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումը:

Հետազոտության արդյունքները քննարկվել են Երևանի «Գլաձոր» համալսարանի «Ընդհանուր տնտեսագիտության» ամբիոնում: Հետազոտության արդյունքները հրատարակված են հեղինակի 6 գիտական հոդվածներում:

Արենախոսության կառուցվածքն ու ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Ատենախոսությունը շարադրված է 130 էջի վրա, ներառյալ գրականության ցանկը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունն ու հրատապությունը, ներկայացվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, օբյեկտը և առարկան, գիտական արդյունքներն ու նորոյթը, ստացված արդյունքների գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև հետազոտության տեղեկատվական հիմքերը:

Ատենախոսության առաջին՝ **«Անկանխիկ հաշվարկների գործառույթները փնտրեսության զարգացման շրջանակում»** գլխում ներկայացվել է անկանխիկ հաշվարկների էությունը, ուսումնասիրվել են դրանց իրականացման առանձնահատկությունները, վճարահաշվարկային հարաբերությունների ձևավորման միջազգային փորձը, ինչպես նաև հաշվարկային գործիքների զարգացման հեռանկարները:

Յուրաքանչյուր երկրի տնտեսությունում խիստ կարևորվում է վճարահաշվարկային համակարգերի դերը, քանի որ դրանք մեծապես նպաստում են դրամավարկային քաղաքականության իրականացման արդյունավետության բարձրացմանը, ֆինանսական կայունության ապահովմանը և, ընդհանուր առմամբ, տնտեսության զարգացմանը: Արդյունավետ վճարահաշվարկային համակարգի առկայությունն արագացնում է փողի շրջապտույտը, հանդիսանում է որպես կապող օղակ ֆինանսական միջնորդության ինստիտուտների միջև, բարձրացնում է դրամական փոխանցումների և այլ վճարումների հստակությունն ու օպերատիվությունը և, որ ամենակարևորն է, էականորեն փոքրացնում է ֆինանսական ռիսկերի առաջացման հավանականությունը:

Անցումային փուլում գտնվող և հատկապես հետխորհրդային երկրներում ձևավորված վճարահաշվարկային համակարգերն, ակնհայտորեն, չէին կարող համապատասխանել շուկայական հարաբերություններով պայմանավորված սկզբունքներին: Այդ իսկ պատճառով, որոշ երկրներում վճարահաշվարկային համակարգերի ձևավորման, դրանցում ժամանակակից ծառայությունների մատուցման, ոլորտին բնորոշ հարաբերությունների կարգավորման, ինչպես նաև վերահսկողության իրականացման գործառույթները դրվեցին սովյալ երկրների կենտրոնական բանկերի վրա: Ըստ էության, այն երկրներում, որտեղ նշված գործառույթներն իրականացվեցին կենտրոնական բանկերի կողմից, գրանցվեցին լուրջ հաջողություններ (Ուկրաինա, Էստոնիա, Լատվիա, Լեհաստան, Բուլղարիա, Չեխիա և այլն):¹

Ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ հանդիպում են վճարահաշվարկային համակարգի տարբեր մեկնաբանություններ և սահմանումներ: Օրինակ, ըստ մասնագետների դիտարկումների, վճարահաշ-

¹Տե՛ս E. G. Johnson «Payment Systems, Monetary Policy, and the Role of the Central Bank» // International Monetary Found. 1998. page 81.

վարկային համակարգը դա «կազմակերպական բնույթի միջոցառումների ամբողջություն է, որն իրականացվում է սահմանված կարգի հաշվարկային փաստաթղթերով՝ փաստաթղթաշրջանառության կանոնների խստիվ պահպանմամբ»:² Հարկ ենք համարում նշել, որ վճարահաշվարկային համակարգն ավելի ընդգրկուն և բազմաթիվ գործառույթներ իրականացնող համակարգ է, և դրա արդյունավետ ու հուսալի գործունեությամբ է պայմանավորված ոչ միայն առևտրային բանկերի, ֆինանսավարկային ինստիտուտների, այլ նաև ողջ պետության տնտեսության զարգացումն առհասարակ: Սակայն, վերոնշյալ սահմանումների բովանդակությունը և ոչ էլ վճարահաշվարկային համակարգերի նկարագրությունը, թույլ չեն տալիս հանգել այդպիսի եզրակացության:

Հետինակի կարծիքով, վճարահաշվարկային համակարգը՝ վճարային գործիքների կիրառման, քլիրինգային գործարքների իրականացման, դրամական միջոցների փոխանցման ու համապատասխան հաշվարկների կատարման ընդհանուր կանոնների և ընթացակարգերի տեխնիկական և ծրագրային միջոցների ամբողջության համալիր գնահատականի հիման վրա մշակված էլեկտրոնային փողերով իրականացվող առևտրի, դրանց հետ կապված գործարքների կազմակերպման և էլեկտրոնային փաստաթղթերի ձևակերպման, ինչպես նաև վերջիններիս ճանաչման և տվյալ գործընթացի իրականացման տնտեսական և իրավական հիմնական սկզբունքների ամբողջություն է:

ՀՀ օրենսդրությամբ ԿԲ-ին վերապահված է վճարահաշվարկային համակարգի գործունեությունը կարգավորելու և վերահսկելու իրավասություն, ըստ որի նա մասնակցում է վճարահաշվարկային հարաբերությունները կանոնակարգող ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակմանը, ընդունում է վճարահաշվարկային հարաբերությունները կարգավորող նորմատիվ ակտեր, սահմանում է այդ բնագավառը բնութագրող վիճակագրական հաշվետվությունների ձևեր և առևտրային բանկերի և այլ կազմակերպությունների կողմից դրանց ներկայացման կարգեր: ՀՀ վճարահաշվարկային բնագավառի զարգացման և կարգավորման հետ կապված ԿԲ-ն իրականացնում է անհրաժեշտ համակարգերի նախագծում, համապատասխան վարչարարության կիրառում, այդ ուղղությամբ գործունեության կանոնների սահմանում, վճարահաշվարկային համակարգի անխափան գործունեության ապահովում և այլն:

Հայաստանի Հանրապետությունում վճարահաշվարկային համակարգի գործունեության և անկանխիկ հաշվարկների իրականացման հետ կապված հարաբերությունները կանոնակարգված են ՀՀ օրենսդրությամբ, մասնավորապես, համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, հանրապետությունում

²Տե՛ս «Деньги, кредит, банки» // Под ред. О.И.Лаврушина. «Финансы и статистика», Москва, 1999, стр. 78-79.

անկանխիկ վճարային գործարքները կարող են դասակարգվել որպես դեբետային և կրեդիտային գործարքներ, վճարային քարտեր, ինչպես նաև ապրանքատարածման փաստաթղթերի դիմաց վճարային գործիքներ: Ընդ որում, անկանխիկ հաշվարկների համար կարող են կիրառվել վճարային հանձնարարականներ, վճարային պահանջագիր-հանձնարարականներ, չեկեր, մուրհակներ, ակրեդիտիվներ, ինկաստներ, պլաստիկ քարտեր՝ դրանց ընտրությամբ թողնելով գործարքի մասնակիցներին:³

Վճարահաշվարկային համակարգերում առևտրային բանկերն, ունենալով առանձնահատուկ դեր, կատարում են հաճախորդների հաշիվների բացում և վարում, որոնք պետք է իրականացվեն տնտեսական գործարքների նպատակահարմարությամբ, մասնակցների իրավունքների պաշտպանությամբ, ինչպես նաև իրականացված գործողությունների համար նյութական պատասխանատվությամբ: Անկանխիկ հաշվարկների ներկայացված սկզբունքներն, անշուշտ, պետք է վերաբերվեն ինչպես իրավաբանական, այնպես էլ ֆիզիկական անձանց: Միևնույն ժամանակ, օրենսդրաիրավական որոշակի հիմքերի առկայությունը դեռևս չի հանդիսանում անհրաժեշտ պայման վճարահաշվարկային արդյունավետ համակարգերի ստեղծման և դրա հետ կապված հիմնախնդիրների լուծման համար: Այդ առումով, չափազանց կարևոր է դառնում առևտրային բանկերում գործուն վճարահաշվարկային համակարգերի ստեղծման, դրանցում ժամանակակից վճարային ձևերի կիրառման և այդ ուղղությամբ ծառայությունների մատուցման արդիական գործիքների օգտագործման խնդիրների լուծումը:

Հարկ է նշել, որ վերը նշված խնդիրների լուծմանը զուգահեռ անհրաժեշտ է հանրապետության վճարահաշվարկային համակարգում հետևողականորեն ներդնել միջազգային ստանդարտները, ինչը թույլ կտա բարձրացնել համակարգի արդյունավետությունը և ֆինանսական հոսքերի կառավարման թափանցիկությունը, ինչպես նաև զարգացնել միջազգային վճարումների կատարման գործընթացը և այլն: Նման մոտեցումն, անշուշտ, կստեղծի առողջ ֆինանսական միջավայր, որն էլ կնպաստի կայուն և թափանցիկ վճարահաշվարկային համակարգի ձևավորմանը: Մասնավորապես, Հայաստանում ISO 20022 միջազգային ստանդարտի հիման վրա անկանխիկ հաշվարկների ազգային ստանդարտների մշակումը թույլ կտա ընդհանուր վճարման մոդելը համապատասխանեցնել Հայաստանի վճարման պայմաններին և ձևավորել միասնական ընթացակարգեր ու ձևաչափեր վճարման հաշվարկների և դրանց իրականացման ընթացքում ուղեկցող տեղեկատվության փոխանցման համար: Վճարման այս մոդելը պետք է լիովին համապատասխանի իրավական դաշտի պահանջներին և առավելագույնս բավարարի անկանխիկ հաշվարկներից օգտվողների պահանջները: Դա հնարավոր է իրականացնել ընդլայնված

³ Տե՛ս << Կենտրոնական բանկի պաշտոնական կայքէջ՝ <https://www.cba.am/am/SitePages/pspaymentinstruments.aspx>


նորարարական մեխանիզմների և լրացուցիչ ծառայությունների կիրառմամբ, ինչպիսիք են, օրինակ, բանկային հաշիվների էլեկտրոնային կառավարումը (eBAM) կամ հաշիվների էլեկտրոնային փոխանակումը (eInvoice):

Ատենախոսության երկրորդ՝ **«Անկանխիկ հաշվարկների և վճարահաշվարկային համակարգի զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» գլխում** բնութագրվել են ՀՀ վճարահաշվարկային համակարգի ձևավորման և զարգացման փուլերը, ներկայացվել են համակարգում կիրառվող անկանխիկ հաշվարկները, գնահատվել է դրանց արդյունավետությունը, ինչպես նաև բացահայտվել են վճարահաշվարկային հարաբերությունների իրավական կարգավորման հիմնախնդիրները:

Ժամանակակից հարաբերությունների պայմաններում էականորեն մեծացել է անկանխիկ վճարումների դերն ինչպես երկրի, այնպես էլ վճարային համակարգի յուրաքանչյուր մասնակցի համար: Այն դարձել է տնտեսության զարգացման կարևոր խնդիրներից մեկը: Այն հայտ է, որ վճարային անկանխիկ գործիքների ծավալների մեծացումը հանգեցնում է ոչ միայն կանխիկ դրամի շրջանառության կրճատմանը, այլ նաև երկրում ընդհանուր գործարար ակտիվության բարձրացմանը: Այս առումով, հատկապես պետք է կարևորել վճարային պլաստիկ քարտերի բնագավառում միկրոպրոցեստրային տեխնոլոգիաների ներդրման (սմարթ քարտերի թողարկում և սպասարկում, e-commerce տեխնոլոգիայի զարգացում, էլեկտրոնային փողերի կիրառում և այլն), ինչպես նաև վճարահաշվարկային ծառայություններ մատուցող կազմակերպությունների գործունեության կարգավորման և լիցենզավորման գործընթացները: Վերջիններս առավելապես դրսևորվել են հիմնականում հանրապետության բանկային համակարգում, ինչի արդյունքում էականորեն աճել են էլեկտրոնային վճարումների ծավալն ու քանակը առևտրային բանկերում (տե՛ս գծապատկեր 1):

Հայաստանում կանխիկ վճարումների ծավալը փոքրացնելու և բանկային գործառնությունների ոլորտում բնկաչության ներգրավվածության աստիճանը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է հետևողականորեն ընդլայնել բանկերի կողմից մատուցվող ծառայությունների դաշտը: Ընդ որում, պետք է հատկապես ընդլայնել այն հնարավորությունները, որոնք կապված են հանրապետությունում ներքին վճարումների իրականացման հետ: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում իրականացնել մի շարք միջոցառումներ նաև վճարային համակարգի վերահոսկողության բնագավառում, ինչը ենթադրում է մոնիտորինգի և համապատասխան վերլուծությունների իրականացում, հանրային նշանակության վճարային համակարգերի գնահատման չափանիշների վերամշակում և այլն: Նշված գործընթացները, բնականաբար, պետք է ուղղված լինեն իրացվելիության համակարգում ժամանակակից մեխանիզմների կիրառման, ռիսկերի կառավարման արդյունավետության, ինչպես նաև գործառնությունների հուսալիության բարձրացմանն ու անվտանգության ապահովմանը:

Ցանկացած երկրում, այդ թվում Հայաստանում, հիմնավորված դրամավարկային քաղաքականության իրականացման, տնտեսական կապերի ամրապնդման և ֆինանսական միջնորդության ինստիտուտների զարգացման համար նպաստավոր պայմաններ կարող են ստեղծվել միայն արդյունավետ և հուսալի վճարահաշվարկային համակարգի առկայության դեպքում:



Գծապատկեր 1. Անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում կատարված փոխանցումների քանակն ու ծավալը⁴

Համակարգի աշխատանքներում խափանումները կարող են առաջացնել անվստահություն ինչպես տնտեսավարող սուբյեկտների մոտ, այնպես էլ վճարահաշվարկային համակարգի նկատմամբ ընդհանրապես: Արդյունքում կարող է նվազել ֆինանսական հաստատությունների գործունեության արդյունավետությունը, ինչպես նաև վտանգվել շրջանառության մասնակիցների կողմից պարտավորությունների կատարումը⁵: Այդ առումով, իրավական հստակ հիմքեր ունեցող և արդյունավետ վճարահաշվարկային համակարգի պայմաններում, ըստ հեղինակի, կբացառվեն հնարավոր վտանգները, կստեղծվեն դրամավարկային բարենպաստ պայմաններ, կձևավորվի վերահսկողության ժամանակակից մեխանիզմներ ոլորտի կառավարման և վճարման համակարգում: Հետևաբար, դրանում կապահովվի անհրաժեշտ որակական զարգացում, ինչն, իր հերթին, կբերի անկանխիկ վճարումների տեսակարար կշռի մեծացմանը⁶:

⁴ Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ-ի պաշտոնական ինտերնետային կայքէջ: «Վճարահաշվարկային համակարգ, վիճակագրություն և հաշվետվություններ» բաժին, <https://www.cba.am/am/SitePages/psstatisticaldatareports.aspx>

⁵ Տե՛ս «The Future of Payments», Edited by Andrew G.H., Stephen M., Victoria S. 2008, Routledge Ny & London p. 23.

⁶ Տե՛ս նույն տեղում՝ էջ 89:

Տնտեսական շրջանառության արդյունավետ ու անխափան ընթացքն ապահովելու համար պետք է կարևորել վճարումների իրականացմամբ պայմանավորված գործառույթների կանոնակարգումը, փոխադարձ պարտավորությունների և դրանց հետ կապված հաշվարկների կատարումը: Իրավական կարգավորման առումով ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքով կարգավորում են վճարահաշվարկային կազմակերպությունների անվճարունակության, վերակազմավորման և լուծարման հարաբերություններն, ինչպես նաև սահմանվում են անհրաժեշտ ընթացակարգերը: Համաձայն օրենքի վճարահաշվարկային համակարգի մասնակիցներ կարող են լինել Կենտրոնական բանկը, ՀՀ տարածքում գործող բանկերն ու օտարերկրյա բանկերի մասնաճյուղերը, վճարահաշվարկային կազմակերպությունները և վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու իրավասություն ունեցող այլ անձիք, որոնց միջև հարաբերությունների կարգավորվածությունը դեռևս չի համապատասխանում միջազգային ստանդարտներով սահմանված չափորոշիչներին:

Կատարված հետազոտությունները ցույց են տալիս, որ տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ համաշխարհային մասշտաբով տեղի է ունենում վճարային և հաշվարկային համակարգերի իրավական կարգավորիչ դաշտերի շարունակական կատարելագործում: Այդ ուղղությամբ հետազոտություններ իրականացրած երկրների ավելի քան 70 տոկոսի մոտ ձևավորված իրավական դաշտով կարգավորվում են այնպիսի առանցքային հարաբերություններ, որոնք առնչվում են կողմերի տարաձայնությունների, ցանցային, կապուղային և էլեկտրոնային մշակման հետ կապված խնդիրներին: Ընդ որում, զարգացած երկրներում արդեն իսկ ձևավորված են վճարահաշվարկային հարաբերությունների կարգավորման համալիր և ամբողջական իրավական համակարգեր:

Զարգացող երկրներում վճարահաշվարկային հարաբերությունների կարգավորման դաշտը դեռևս գտնվում է ձևավորման փուլում, սակայն այդ ոլորտում կայունության ձեռք բերումը հանդիսանում է կարևոր պայման վճարահաշվարկային համակարգի հետագա զարգացման և հաշվարկների ժամանակակից ձևերի ներդրման համար:

Ընդհանրացնելով, հարկ է նշել, որ չնայած վճարահաշվարկային համակարգում կենտրոնական բանկերի ունեցած դերի տարբերություններին, դրանց գործունեությունն ուղղված է իրենց երկրների ֆինանսական համակարգերի գործունեության արդյունավետության բարձրացմանը, նվազագույն ռիսկեր պարունակող և հիմնավորված ծախսեր պահանջող վճարահաշվարկային համակարգերի ձևավորմանն ու ներդրմանը:


Ատենախոսության երրորդ՝ **«Վճարահաշվարկային համակարգերի արդյունավետության գնահատման բարելավումը» գլխում** հետազոտվել են ՀՀ

վճարահաշվարկային համակարգի զարգացման արդի միտումները, բացահայտվել են անկանխիկ հաշվարկների արդյունավետության բարձրացման ուղղությունները և առաջարկվել են ՀՀ-ում անկանխիկ գործարքների իրականացման արդիական գործիքների ներդրման ուղիներ:

Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկայում և բանկային համակարգում իրականացված բարեփոխումների արդյունքում ձևավորվեցին միջազգային վճարահաշվարկային համակարգերին անդամակցելու և վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու անհրաժեշտ հիմքեր: Մասնավորապես, հանրապետության առևտրային բանկերը ստացան տարբեր միջազգային վճարային համակարգերին (Money Gram, LIDER, Armenian Express և այլն) անդամակցելու, ինչպես նաև AMEX միջազգային համակարգի քարտերը սպասարկելու թույլտվություն: Այս հանգամանքն ունեցավ էական դեր հանրապետության վճարահաշվարկային կազմակերպությունների ֆինանսական վիճակի բարելավման գործում, քանի որ դա դարձավ անհրաժեշտ խթան էլեկտրոնային փողերի շրջանառության կազմակերպման և այդ գործընթացի հետագա զարգացման համար:

Հարկ է սակայն նշել, որ հանրապետությունում ձևավորված օրենսդրահարավական դաշտի դեռևս ոչ լիարժեք լինելու հանգամանքը ստեղծում է տարբեր խաչընդոտներ էլեկտրոնային փողերի կիրառումը գործնական հիմքերի վրա դնելու համար: Մասնավորապես, համաձայն գործող օրենսդրության սահմանված է էլեկտրոնային փողերով գործարքների առավելագույն չափի չափազանց ցածր մակարդակ: Մինչդեռ, ինտերնետ առևտուրը, միտված լինելով կազմակերպությունների համար միջազգային շուկաներ դուրս գալուն՝ մի կողմից, և սպառողների համար ինտերնետի միջոցով արտերկրից ապրանքներ ձեռք բերելուն՝ մյուս կողմից, ենթադրում է ավելի մեծ շրջանառության ծավալներ (տե՛ս գծապատկեր 2): Բացի այդ, հանրապետությունում, էլեկտրոնային փողեր թողարկողների և օգտագործողների, ծառայություններ մատուցողների և գործակալների և այլ շահագրգիռ կողմերի միջև հարաբերությունների կանոնակարգման իրավասությունը վերապահված է թողարկողներին և ամրագրվում է համապատասխան պայմանագրերով: Սակայն, ակնհայտ է, որ նպատակահարմար կլիներ շուկայի մասնակիցների միջև մրցակցությունն ընթանար նրանց կողմից առաջարկվող ծառայությունների որակի բարձրացման, դրանց բազմազանության ապահովման և սակագների նվազեցման ուղղություններով:

Վճարահաշվարկային համակարգերի գործունեության և էլեկտրոնային փողերի օգտագործման արդյունավետության գնահատման նպատակով ատենախոսության շրջանակներում քանակական վերլուծության մեթոդների օգնությամբ իրականացված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ առաջին հերթին պետք է.



Գծապատկեր 2. Էլեկտրոնային առևտրի B2C վաճառքը ասիական երկրներում 2013-2018 թթ.⁷

- ապահովվի վճարային հասանելիության անհրաժեշտ մակարդակ,
- տեղեկատվական տեխնոլոգիաները ունենան անվտանգության բարձր աստիճան,
- համակարգը լինի մատչելի և ունենա հաճախորդների ներգրավման մարքեթինգային ճկուն ծրագիր,
- էլեկտրոնային փողերի շրջանառության վերաբերյալ ապահովվի պատշաճ և թափանցիկ տեղեկատվություն:

Ուսումնասիրության ընթացքում ենթադրվել է, որ վճարային համակարգը գործում է N տիրույթներում, որի արդյունավետության ցուցանիշը հաշվարկվել է հետևյալ բանաձևով.

$$K = \frac{1}{N} \sum_{i=1}^N K_i \quad (1^8)$$

որտեղ՝ K_i - i-րդ տիրույթում շրջանառվող էլեկտրոնային փողերով վճարման արդյունավետության ցուցանիշն է, որի հաշվարկի համար առաջարկվել է հետևյալ բանաձևը.

$$K_i = \frac{\alpha_i \cdot S_i \cdot \ln V_i \cdot (1 + \theta_i)}{(1 + \beta_i) \left(1 + \frac{T_i}{100}\right) \cdot \ln j_i} \quad (2^9)$$

⁷ Տե՛ս Առցանց վեբ դիզայնի և ծրագրավորման միջազգային կազմակերպության ինտերնետային կայք՝ www.go-globe.com GO-GLOBE

⁸ Կազմվել է առենախոսի կողմից:

⁹ Կազմվել է առենախոսի կողմից:

որտեղ՝

ai - i-րդ տիրույթում էլեկտրոնային վճարային գործիքի հասանելիության գործակիցն է,

S - i-րդ տիրույթում էլեկտրոնային վճարային գործիքի հուսալիության ցուցանիշն է,

V - i-րդ տիրույթում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ից տվյալ համակարգում շրջանառվող դրամական միջոցներն են,

B - i-րդ տիրույթում վճարման ձևակերպման ժամանակահատվածի հետ կապված ակնկալվող եկամտի գործակիցն է,

r - i-րդ տիրույթում գործարքի տոկոսադրույքն է,


J - i-րդ տիրույթում գործող վճարային գործիքների քանակն է,

Θ - վճարային գործիքի օգտագործումից ստացված արդյունքն է:

Այս առումով հարկ է նշել, որ Հայաստանում էլեկտրոնային փողերի ժամանակակից համակարգի ձևավորման արագացման և դրանց կիրառման արդյունավետության ապահովման համար անհրաժեշտ է հանրապետության ԿԲ-ի և առևտրային բանկերի հետևողական և համատեղ աշխատանքը, որի արդյունքում պետք է ձևավորել համապատասխան մասնաբաժիններով ընդհանուր ֆոնդ, որն էլ, գործելով կոնկրետ բանկի անունից, կարող է թողարկել էլեկտրոնային փողեր: Դրանք, անշուշտ, պետք է հասանելի լինեն հայաստանյան բոլոր բանկերի հաճախորդներին, որոնք այդպիսով կստանան լայն հնարավորություն աշխարհի ցանկացած կետում օգտագործել իրենց էլեկտրոնային փողերը և առցանց բանկային ծառայությունների միջոցով կատարել անհրաժեշտ վճարումներ:

Հեղինակն արդիական է համարում նաև կիրառելու վճարահաշվարկային համակարգերի կիրառման արդյունավետության գնահատման և մոնիտորինգի ընթացակարգ (տես գծապատկեր 3), որը պետք է հաշվի առնի.

- վճարահաշվարկային կազմակերպությունների ծախսահատույցը,
- վճարահաշվարկային համակարգի ֆինանսական կայունությունը,
- անկախիկ ծառայություններից օգտվող շահառուների բավարարվածության աստիճանը,
- վճարահաշվարկային նորամուծական տեխնոլոգիաների ներդրման հատույցը,
- վճարահաշվարկային գործառույթների ֆինանսական անվտանգությունը:



Գծապատկեր 3. Վճարահաշվարկային համակարգերի գործունեության արդյունավետության գնահատման և մոնիտորինգի առաջարկվող հայեցակարգ¹⁰

Նպատակադրված յուրաքանչյուր ցուցանիշի հասանելիության աստիճանը հանդես է գալիս որպես վճարահաշվարկային համակարգի գործունեության արդյունավետության չափման առանձին բաղադրիչ՝ E_{i1}/E_{i0} , որը կարող է առնձնացված մոնիտորինգի ենթարկվել: Իսկ վճարահաշվարկային համակարգի

¹⁰ Կազմվել է առնեախոսի կողմից:

համընդհանուր արդյունավետությունը (E) առաջարկվում է հաշվարկել հետևյալ մոտեցմամբ.

$$E = (\sum E_i / E_{i0}) / n^{11}$$

որտեղ n -ը՝ արդյունավետության շրջանակում սահմանված նպատակադրումների թվաքանակն է:

Հետևաբար, որքան առաջարկվող ինտեգրալային ցուցանիշը ձգտի 1,0-ի, այնքան բարձր կգնահատվի վճարահաշվարկային համակարգի արդյունավետությունը:

Ամփոփելով, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում էլեկտրոնային փողերի ժամանակակից համակարգի ձևավորման գործընթացն արագացնելու և դրանց շրջանառության արդյունավետությունն ապահովելու համար անհրաժեշտ է ԿԲ-ի և առևտրային բանկերի համատեղ և հետևողական աշխատանք: Արդյունքում պետք է ձևավորել համապատասխան մասնաբաժիններով ընդհանուր ֆոնդ, որը, գործելով կոնկրետ բանկի անունից, կարող է թողարկել էլեկտրոնային փողեր: Դրանք, անշուշտ, պետք է հասանելի լինեն հայաստանյան բոլոր բանկերի հաճախորդներին, որոնք այդպիսով կստանան լայն հնարավորություն աշխարհի ցանկացած կետում օգտագործել իրենց էլեկտրոնային փողերը և առցանց բանկային ծառայությունների միջոցով կատարել անհրաժեշտ վճարումներ: Առաջարկված մոտեցման գործնական կիրառումն, անշուշտ, թույլ կտա համեմատաբար քիչ ներդրումներով ներգրավել ավելի շատ հաճախորդներ և զգալիորեն մեծացնել անկանխիկ շրջանառության ծավալն, ինչպես նաև առևտրային բանկերին իրականացնել ֆինանսական հոսքերի ավելի ճկուն կառավարում:

Ատենախոսության եզրակացություններում ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները և հակիրճ ձևակերպված են **եզրահանգումները**.

1. Հայաստանում ֆինանսական կայունության ապահովման կարևոր ուղղություններից մեկը հանրապետությունում ձևավորված վճարահաշվարկային համակարգի արդիականացումը և անկանխիկ ֆինանսական գործարքների զարգացումն է: Ժամանակակից վճարահաշվարկային համակարգն ենթադրում է անկանխիկ ֆինանսական գործարքների իրականացում, արդյունավետ վճարային գործիքների կիրառում, դրամական հոսքերի ճիշտ կազմակերպում, էլեկտրոնային առևտրի խթանում, համապատասխան հաշվարկների կատարում, ինչպես նաև այդ գործընթացների կառավարում և դրանց բնորոշ հարաբերությունների իրավական կարգավորում: Նշված ուղղություններով հանրապետությունում կատարվել է որոշակի աշխատանք, որի իրականացման պարտավորությունը հիմնականում դրված է ԿԲ-ի և առևտրային բանկերի վրա: Միևնույն ժամանակ, ինչպես իրավական կարգավորման, այնպես էլ

¹¹ Կազմվել է ատենախոսի կողմից:

գործառնական աշխատանքների կատարման առումով կան բազմաթիվ խնդիրներ, որոնց լուծումը պահանջում է ոլորտում ժամանակակից մոտեցումների ու մեխանիզմների մշակում և ներդրում: Ընդ որում, վճարահաշվարկային համակարգի արդյունավետության համար հաճախորդների հաշիվների բացման և անկանխիկ հաշվարկների կատարման ժամանակ, առաջին հերթին, պետք է ապահովվեն գործարքի տնտեսական նպատակահարմարության, սուբյեկտների իրավունքների պաշտպանության, ինչպես նաև իր գործողությունների համար առևտրային բանկի նյութական պատասխանատվության սկզբունքները:

2. Վճարահաշվարկային համակարգերի գործունեության կարգավորման իրավական որոշակի հիմքերի առկայությունը դեռևս չի հանդիսանում անհրաժեշտ և բավարար պայման դրանց արդյունավետության ապահովման և այդպիսի համակարգերի շահագործման հետ կապված հիմնախնդիրների լուծման համար: Այդ առումով, հանրապետության առևտրային բանկերում պետք է ստեղծել գործուն վճարահաշվարկային համակարգեր, դրանցում կիրառել վճարման ժամանակակից ձևեր և ներդնել գործառնությունների իրականացման արդիական գործիքներ: Տվյալ գործընթացի հաջողությունը մեծապես պայմանավորված է միջազգային փոխանցումների համակարգի առկայությամբ, որը հիմնականում ենթադրում է անկանխիկ վճարումների կատարում և էլեկտրոնային փողերի օգտագործում: Այս հանգամանքը պետ է խիստ կարևորել, քանի որ, արտագնա աշխատանքի արդյունքում քաղաքացիների կողմից հանրապետություն է փոխանցվում դրամական միջոցների բավականաչափ մեծ ծավալ, ինչը կարող է դառնալ Հայաստանում միջազգային փոխանցումների արդյունավետ համակարգի ձևավորման լուրջ նախադրյալ:

3. Դրամական միջոցների անկանխիկ փոխանցումների հետ կապված հաշվարկային փաստաթղթերի ձևակերպման և դրանց շրջանառության ընթացակարգերի սահմանման հիմնավորվածությունն ու հստակությունն ապահովելու համար պետք է մշակել հաշվարկների ազգային ստանդարտներ, որոնք հիմնված լինելով այդ ուղղությամբ ձևավորված միջազգային տեխնոլոգիաների վրա, կներառեն էլեկտրոնային հաղորդագրության փոխանակման թափանցիկ և պարզ ձևաչափեր ու սխեմաներ: Այդպիսով հստակորեն կուրվագծվեն կողմերի փոխհամագործակցության սահմանները դրամական միջոցների փոխանցման ընթացքում, կկատարելագործվեն փաստաթղթաշրջանառության գործընթացները վճարումներն իրականացնելիս և, որ չափազանց կարևոր է, կստեղծվեն նպաստավոր պայմաններ համակարգերի ավտոմատացումն արագացնելու և դրանց արդյունավետությունը բարձրացնելու համար:

4. ՀՀ վճարահաշվարկային համակարգի արդյունավետ և անխափան գործունեության համար դրա զարգացման ռազմավարության մշակման ընթացքում անհրաժեշտություն է ծագում ապահովելու մրցակցային չափանիշներ, հաշվի առնելով նաև այն, որ վերջին տարիներին կտրուկ զարգացումներ են

գրանցվել ինչպես ֆինանսական ոլորտում, այնպես էլ բանկային տեխնոլոգիաների ասպարեզում: Մասնավորապես՝ աճել է վճարումների ծավալը, արագացել է համակարգում դրամական միջոցների տեղաշարժը, ԿԲ-ի և առևտրային բանկերի ուղղորդված և կանոնակարգված համագործակցության արդյունքում, ապահովվել է էլեկտրոնային վճարային միջոցների մուտքն ու սրընթաց զարգացումը դրանում, ինչն, իր հերթին, նպաստել է արժույթի շրջանառության արագացմանը, հետևաբար, նաև ապրանքաշրջանառության և ընդհանուր տնտեսության զարգացմանը:

5. Վճարահաշվարկային հարաբերությունների կարգավորման դաշտը ամբողջականացնելու, համակարգի հետագա զարգացումը խթանելու և հաշվարկների արդիական ձևեր ներդնելու համար անհրաժեշտ է՝

- բարձրացնել հանրապետության ֆինանսական համակարգի արդյունավետությունը, ձևավորել հիմնավորված ծախսեր պահանջող և նվազագույն ռիսկեր պարունակող վճարահաշվարկային համակարգ,
- ներդնել վճարահաշվարկային ծառայությունների և էլեկտրոնային փոխանցումների ժամանակակից համակարգ, ընդունել բանկային հաշիվների և բանկային ծածկագրերի վարման միջազգային չափանիշներին համապատասխանող կարգեր, կատարելագործել միջազգային դրամական հոսքերի կառավարման գործընթացը,
- ընդլայնել միջազգային տնտեսական կառույցների և համակարգերի հետ համագործակցության շրջանակները, վերանայել ֆինանսական ենթակառուցվածքների, այդ թվում, ազգային վճարահաշվարկային համակարգի օրենսդրավական հիմքերը և համալրել դրանք նոր՝ միջազգային ստանդարտներին համապատասխանող չափանիշներով: Այդ ուղղությամբ բարեփոխումների կարևոր քայլ պետք է դառնա էլեկտրոնային դրամական միջոցների փոխանցման և էլեկտրոնային վճարման միջոցների ներդրման գործընթացների արմատավորումը, ինչը թույլ կտա լայնորեն ինտեգրվել վճարային այնպիսի հայտնի համակարգերի, ինչպիսիք են «Pay Pal»-ը, «Perfect Money»-ին, «Ego pay»-ը, «Payza»-ն և այլն,
- իրականացնել վճարահաշվարկային համակարգի համակողմանի վերահսկողություն, երաշխավորել հաշվարկների կատարումն անգամ ֆորսմաժորային իրավիճակների դեպքում:

6. Գործուն վերահսկողությամբ հնարավոր է բացահայտել վճարահաշվարկային համակարգերի և դրամական միջոցների անկանխիկ փոխանցումների այնպիսի խոցելի կողմեր, որոնք կարող են բացառվել ֆինանսական և տեխնոլոգիական նորարարությունների ներդրման արդյունքում: Որպես ֆինանսական նորամուծություն առենախոսությունում առաջարկվել է օգտագործել իրացվելիության կառավարման ժամանակակից մոդելներ և ռիսկերի գնահատման համապատասխան մոտեցումներ, որոնք թույլ կտան իրականացնել

համակողմանի մշտադիտարկում և RTGS համակարգի իրացվելիության առավել արդյունավետ կառավարում: Տեխնոլոգիական նորամուծությունների առումով արված առաջարկությունները կհանգեցնեն համակարգում «օնլայն և հեռախոսային բանկինգ» էլեկտրոնային ծառայությունների սակագների նվազեցման, ինչպես նաև դրանց որակի բարձրացման:

7. Հայաստանում էլեկտրոնային փողերի ժամանակակից համակարգի ձևավորումն արագացնելու և դրանց շրջանառության արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է ԿԲ-ի և առևտրային բանկերի հետևողական և համատեղ աշխատանքի միջոցով, ձևավորել համապատասխան մասնաբաժիններով ընդհանուր ֆոնդ, որը գործելով կոնկրետ բանկի անունից, կկարողանա թողարկել էլեկտրոնային փողեր: Դրանք, ըստ հեղինակի, պետք է հասանելի լինեն հայրենական բոլոր բանկերի հաճախորդներին, որոնց կընձեռնվի լայն հնարավորություն աշխարհի ցանկացած կետում օգտագործել էլեկտրոնային փողեր և առցանց բանկային ծառայությունների միջոցով կատարել անհրաժեշտ վճարումներ: Հեղինակի կարծիքով առաջարկված մոտեցման գործնական կիրառումը թույլ կտա համեմատաբար քիչ ներդրումներով ներգրավել ավելի շատ հաճախորդներ և զգալիորեն մեծացնել անկանխիկ շրջանառության ծավալը, բարձրացնելով առևտրային բանկերի կողմից իրականացվող ֆինանսական հոսքերի կառավարման արդյունավետությունը:

8. Մշակվել է անկախիկ հաշվարկների արդյունավետության գնահատման ցուցանիշ, հիմնված արտաքին և ներքին շահառուների նպատակադրումների փաստացի հասանելիության աստիճանի վրա, որը թույլ է տալիս համախմբված վերլուծության ենթարելու վճարահաշվարկային համակարգի արդյունքային բազմաբնույթ ցուցիչները՝ ոլորտին առնչվող տնտեսավարող սուբյեկտների պահանջմունքների բավարարման տեսանկյունից: Ընդ որում, արդյունավետության գնահատման առաջարկվող ցուցանիշը ընդգրկում է ոչ միայն ֆինանսական, այլև ոչ ֆինանսական ցուցիչներ (փոխացումների արագություն, անվտանգություն, հուսալիություն և այլն), որը թույլ է տալիս իրականացնելու անկանխիկ հաշվարկների արդյունավետության բազմագործոն վերլուծություն և համալիր մոնիտորինգ:

9. Հետազոտության արդյունքում մշակվել է վճարահաշվարկային համակարգերի կիրառման արդյունավետության գնահատման և մոնիտորինգի հայեցակարգ, որը հաշվի է առնում վճարահաշվարկային կազմակերպությունների ծախսահատույցը, վճարահաշվարկային համակարգի ֆինանսական կայունությունը, անկախիկ ծառայություններից օգտվող շահառուների բավարարվածության աստիճանը, վճարահաշվարկային նորամածուական տեխնոլոգիաների ներդրման հատույցը և վճարահաշվարկային գործառույթների ֆինանսական անվտանգությունը: Հայեցակարգային նոր մոտեցումների կիրառելիության աջակցման նպատակով մշակվել են ՀՀ-ում իրականացվող անկանխիկ գործարքների նորմատիվային կարգավորման բարելավման

անչվող առաջարկություններ, ուղղված վճարահաշվարկային կազմակերպությունների տնտեսական նորմատիվների որակական բնութագրիչների վերանայմանը և միջազգային չափանիշներով վճարահաշվարկային գործունեության կազմակերպմանը:

10. Հեղինակը մշակել է էլեկտրոնային փողերի օգտագործման արդյունավետության գնահատման հնտեգրալային ցուցանիշ, որի արդյունքում հնարավորություն է ստեղծվում վերլուծելու ընտրված տիրույթում վճարահաշվարկային գործունեության պարամետրերի ինտեսիվությունը և համեմատություններ անցկացնելու անկանխիկ հաշվարկների սոցիալ-տնտեսական արդյունքների միջև լոկալ, տարածաշրջանային և միջազգային տիրույթներում: Ինտեգրալային ցուցանիշը ներառում է այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են՝ i-րդ տիրույթում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ից տվյալ համակարգում շրջանավոր դրամական միջոցները, վճարման ձևակերպման ժամանակահատվածի հետ կապված ակնկալվող եկամտի գործակիցը, անկանխիկ գործարքի տոկոսադրույքը, գործող վճարային գործիքների քանակը, վճարային գործիքի օգտագործումից ստացված արդյունքը:

Արենախոսության հիմնական դրույթները հրապարակվել են հեղինակի հեղկյալ աշխարհություններում.

1. Գասպարյան Լ. «Պլաստիկ քարտերի միջազգային զարգացման ընթացքը և ՀՀ-ում դրանց գործունեության արդյունավետությունը» // Երևանի «Անանիա Շիրակացի» Միջազգային հարաբերությունների համալսարանի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածու 1-17: Երևան, «Անանիա Շիրակացի» համալս. հրատ., 2013թ., էջ 120-127:

2. Գասպարյան Լ. «ՀՀ վճարահաշվարկային համակարգը և դրա դերը տնտեսության զարգացման գործում» // Երևանի «Անանիա Շիրակացի» Միջազգային հարաբերությունների համալսարանի «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածու 1-18: Երևան, «Անանիա Շիրակացի» համալս. հրատ., 2013թ., էջ 88-97:

3. Բոստանջյան Վ., Գասպարյան Լ. «Վճարահաշվարկային համակարգերի և էլեկտրոնային առևտրի զարգացման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» // «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, հուլիս-սեպտեմբեր, 2015թ., #3, էջ 54-61:

4. Գասպարյան Լ. «Վճարահաշվարկային հարաբերությամբ իրավաբանական կարգավորման խնդիրները» // «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր, 2015թ., #4, էջ 76-82:

5. Գասպարյան Լ. «Էլեկտրոնային փողերը որպես վճարահաշվարկային գործառնությունների իրականացման արդյունավետ միջոց» // «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր, 2015թ., #4, էջ 76-82:
6. Գասպարյան Լ. «Վճարահաշվարկային համակարգի խնդիրները և դրանց լուծման ուղղությունները» // «Այլընտրանք» եռամսյա գիտական հանդես, հունվար-մարտ, 2018թ., #1, էջ 376-383:

ГАСПАРЯН ЛУСИНЕ ОВАКИМОВНА

ПУТИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ БЕЗНАЛИЧНЫХ РАСЧЕТОВ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата экономических наук по специальности 08.00.03 – «Финансы, бухгалтерский учет».

Защита диссертации состоится 22-ого января 2020 года, в 14⁰⁰, на заседании Специализированного совета 008 ВАК РА по экономике, действующего при Российско-Армянском университете. Адрес: 0051, РА, г. Ереван, ул. Овсепя Эмина 123.

РЕЗЮМЕ

Платежно-расчетные системы являются одним из основных элементов экономики каждой страны, и правильное распределение финансовых ресурсов, а также управление финансовыми потоками требуют функционирования в экономике эффективных платежно-расчетных систем. Надежные и действенные платежно-расчетные системы играют важную роль в деле эффективного функционирования финансовой системы, поскольку в результате эффективной организации сделок по безналичному расчету существенно повышается уровень управления как активами и обязательствами, так и ликвидностью.

При переходе от административно-командной экономики к рыночной в Республике Армения был проведен ряд реформ, направленных на построение, регулирование и надзор, а также совершенствование платежно-расчетных систем, в том числе, были внедрены клиринговая система, международная межбанковская сеть SWANet, система BANK MAIL, а коммерческие банки присоединились к системе SWIFT и различным платежным системам, таким как, Western Union, Money Gram, Unistream, Express и т.д.. Однако, несмотря на все вышесказанное, в сфере функционирования платежно-расчетной системы РА существует ряд нерешенных проблем, которые существенным образом воздействуют на ее эффективность.

Диссертационная работа посвящена изучению вышеотмеченных проблем и разработке путей их решения, чем и обусловлена **актуальность темы исследования**.

Целью предлагаемого к рассмотрению исследования является разработка подходов и предложений по внедрению и повышению эффективности оборота электронных денег в платежно-расчетную систему РА в условиях рыночной экономики.

В рамках исследования были поставлены и решены следующие **задачи**:

- ✓ Изучить особенности организации платежно-расчетной системы и разработать экономические принципы осуществления связанных с ней сделок;
- ✓ Проанализировать международный опыт формирования платежно-расчетных отношений и разработать порядки использования электронно-платежных средств;

- ✓ Осуществить разработку методов анализа применения и повышения эффективности безналичных расчетов в платежно-расчетной системе;
- ✓ Изучить региональные проблемы правового регулирования платежно-расчетных отношений;
- ✓ Представить имеющиеся преимущества и уязвимые стороны принятых и действующих методов в платежно-расчетных системах;
- ✓ Разработать практические рекомендации по повышению эффективности платежно-расчетной системы Республики Армения, в частности, безналичных расчетов.
- ✓ Разработать концепцию оценки эффективности и мониторинга платежно-расчетной системы.

Объект и предмет исследования. Объектом исследования являются платежно-расчетные системы и банковская система РА. Предметом исследования являются безналичные расчеты в платежно-расчетной системе, вопросы правового регулирования, а также основные проблемы внедрения новых услуг в системе безналичных расчетов.

Наиболее важные результаты исследования, содержащие **научную новизну**, включают следующие пункты:

- ✓ На основе многосторонней оценки платежно-расчетной системы разработаны методические подходы к осуществлению процессов торговли посредством электронных денег, а также процессов организации связанных с ними сделок и оформления электронных документов и их признания.
- ✓ С целью обеспечения вхождения на финансовый рынок РА известных международных систем разработана программа мероприятий по совершенствованию правового и нормативного регулирования безналичных сделок, направленная на пересмотр качественных характеристик экономических нормативов платежно-расчетных организаций и организацию платежно-расчетной деятельности на основе международных критериев.
- ✓ С целью повышения эффективности безналичных сделок, был разработан метод осуществления расчетов, который, исходя из степени интенсивности имплементации применяемых в процессе параметров (показатель надежности электронного инструмента, оборачивающиеся в системе средства, процентная ставка по сделке, количество платежных инструментов и т.д.), позволит определить общую эффективность сделки.
- ✓ Представлена концепция оценки и мониторинга эффективности деятельности платежно-расчетных систем, основанная на оценивании фактической доступности целеполаганий внутренних и внешних бенефициаров безналичных переводов.

LUSINE HOVAKIM GASPARYAN

THE WAYS OF RAISING NON-CASH PAYMENTS EFFICIENCY IN THE REPUBLIC OF ARMENIA

The abstract of the thesis for receiving the degree of Doctor of Economics in the specialty 08.00.03 – «Finance, Accounting».

The defense of the thesis will take place on 22nd of January, 2020, at 14⁰⁰ o'clock at 008 Council of Economics of SCC RA at Russian-Armenian University: 123 H. Emin str., Yerevan, 0051.

ABSTRACT

Payment and settlement systems are one of the main elements of the economy of each country, and the correct distribution of financial resources, as well as the management of financial flows, require efficient payment and settlement systems in the economy. Reliable and efficient payment and settlement systems play an important role in the effective functioning of the financial system, since as a result of the efficient organization of cashless transactions, the level of management of both assets and liabilities and liquidity is significantly increased.

In the transition from an administrative-command economy to a market economy in the Republic of Armenia, a number of reforms were carried out aimed at building, regulating and supervising, as well as improving payment and settlement systems, including the introduction of a clearing system, CBANet international interbank network, and BANK MAIL system. At the same time commercial banks joined the SWIFT system and various payment systems, such as Western Union, Money Gram, Unistream, Express, etc. However, despite all of the above mentioned, in the sphere of functioning of the payment and settlement system of RA there are a number of unresolved problems that significantly affect its effectiveness.

The thesis is devoted to the study of the above mentioned issues and the development of ways to solve them, which determines the relevance of the research topic.

The aim of the study proposed is the development of approaches and proposals for introducing and improving the efficiency of electronic money circulation in the payment and settlement system of the Republic of Armenia in a market economy conditions.

The following tasks were solved in the frames of the research:

- ✓ Study the features of the organization of the payment and settlement system and develop economic principles for the implementation of transactions related to it;
- ✓ To analyze the international experience in the formation of payment and settlement relations and to develop procedures for the use of electronic payment means;
- ✓ To develop methods for analyzing the application and increasing the effectiveness of cashless payments in the payment and settlement system;
- ✓ To study the regional problems of legal regulation of payment and settlement relations;
- ✓ Present the benefits and vulnerabilities of accepted and current methods in payment and settlement systems;

- ✓ Develop practical recommendations to improve the efficiency of the payment and settlement system of the Republic of Armenia, in particular, non-cash payments.
- ✓ Develop a concept for evaluating the effectiveness and monitoring of the payment and settlement system.

Object and subject of research. The object of the study are the payment and settlement systems and the banking system of the Republic of Armenia. The subject of the research is cashless payments in the payment and settlement system, issues of legal regulation, as well as the main problems of introducing new services in the cashless payments system.

The most important research findings containing **scientific novelty** include the following points:

- ✓ Based on a multilateral assessment of the payment and settlement system, methodological approaches to the implementation of trading processes through electronic money, as well as the processes of organizing related transactions and processing electronic documents and their recognition, have been developed.
- ✓ In order to ensure the entry into the financial market of the Republic of Armenia of well-known international systems, a program of measures has been developed to improve the legal and regulatory regulation of non-cash transactions, aimed at reviewing the qualitative characteristics of the economic standards of payment and settlement organizations and organizing payment and settlement activities based on international criteria.
- ✓ In order to increase the effectiveness of non-cash transactions, a calculation method has been developed that, based on the degree of implementation intensity of the parameters used in the process (indicator of the reliability of an electronic instrument, the funds circulating in the system, the interest rate on the transaction, the number of payment instruments, etc.), will determine the overall effectiveness of the transaction.
- ✓ The concept of evaluating and monitoring the effectiveness of payment and settlement systems based on assessing the actual availability of the goal-setting of internal and external beneficiaries of wire transfers is presented.